

ԱՆՎԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԵՏԸ ԵՎ ՄՏԱՎՈՐԱԿԱՆԸ



Հայ գիտական հանրությունը մեծ կորուստ կրեց: Կյանքի 65-րդ տարում կյանքից հեռացավ վաստակաշատ և ազնիվ գիտնական, մտավորական, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի երկարամյա տնօրեն Վլադիմիր Լիպարիտի Հարությունյանը:

Վլ. Հարությունյանը ծնվել է 1957 թ. մայիսի 21-ին Լոռու մարզի Քարինջ գյուղում: 1979 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը, ապա ընդունվել ասպիրանտուրա: Զբաղեցրել է պատասխանատու պաշտոններ ֆինանսական, հարկային, բանկային, արտադրական ու գիտական ոլորտներում: Դոկտորական ատենախոսությունը պաշտպանել է 2004 թ., իսկ պրոֆեսորի կոչում ստացել է 2007 թ.: Պրոֆեսոր Հարությունյանի հետաքրքրությունների շրջանակը լայն էր: Նա թողեց գիտական մեծ ժառանգություն:

2010 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Դասախոսել է ՀՊՏՀ-ում և ԵՊՀ-ում: 2013 թ. պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով, 2014 թ., 2016 թ. և 2018 թ. «Արդյունավետ գիտաշխատող» մրցույթների հաղթող է: 27 մենագրության և ավելի քան 140 գիտական հոդվածների հեղինակ է: ՀՀ կառավարություն է ներկայացրել 15 կիրառական առաջարկություններ: Նրա ղեկավարությամբ շուրջ 5 տասնյակից ավելի ասպիրանտներ ու հայցորդներ պաշտպանել են գիտական ատենախոսություններ: Գիտնականի պատաս-

խանատվությամբ նախապատրաստվել և հրապարակվել է գիտական հոդվածների 21 ժողովածու:

Վլ. Հարությունյանը գիտականորեն հիմնավորել է հետևյալ դրույթները՝ բյուջեի եկամուտները դասակարգել ըստ հարկ վճարողների խմբերի, ըստ հարկման օբյեկտների ու բազաների և ըստ ոլորտների. մոտեցումներ, որոնք հարկային օրենսդրությամբ դրված են հարկման մեխանիզմների հիմքում: Դրանք իրենց արտացոլումը չեն գտել «Բյուջետային համակարգի մասին» և ամեն տարի ընդունվող «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքներում:

Նա առաջարկել է համապատասխան փոփոխություններ կատարել հարկային օրենսդրության մեջ, որոնք որոշակիացված են ինչպես ըստ առանձին հարկատեսակների մասին ՀՀ օրենքների, այնպես էլ ըստ դրանց համապատասխան հոդվածներում կատարվելիք փոփոխությունների՝ հնարավորություն ընձեռելով ընդլայնելու առանձին հարկատեսակների հարկման բազաները և բարձրացնելու հարկման արդյունավետությունը:

Առաջարկել է նոր մոտեցումներ բյուջետային միջոցների ծախսման արդյունավետության բարձրացման ուղիների վերաբերյալ, որոնք կարող են կիրառական նշանակություն ունենալ հանրապետությունում իրականացվող հարկաբյուջետային քաղաքականության կատարելագործման բնագավառում:

Նրա համոզմամբ՝ կարելի է մինչև 30 տոկոսի հասցնել հարկերը / ՀՆԱ տոկոսային հարաբերակցության ցուցանիշը և այն դիտարկել որպես մակրոտնտեսական ցուցանիշ, հրաժարվել հարկային օրենսդրությունում հաճախակի ու մասնակի փոփոխություններ կատարելու պրակտիկայից, և առաջարկել է դրույթներ, որոնք կնպաստեն՝

- անուղղակի և ուղղակի հարկերի հարաբերակցության փոփոխմանը՝ հօգուտ երկրորդի, քանի որ անուղղակի հարկերը ներառվում են ապրանքների ու ծառայությունների գների մեջ՝ հարկային բեռը տեղափոխելով սպառողների վրա

- պրոգրեսիվ հարկման մոտեցումների գործնականում կիրառմանը. մոտեցումներ, որոնք կիրառվում են զարգացած երկրներում

- միասնական հարկի ձևավորման ու գործնականում կիրառման ճիշտ մոտեցումներ արմատավորելուն, բայց ոչ այնպես, ինչպես կատարվել է «պարզեցված հարկի» և հաստատագրված վճարների պարագայում, որոնք չեն բխում հարկման արտերկրյա փորձից ու հարկման տեսություններից

- հարկային բեռի ինչպես արդարացի, այնպես էլ համաչափ բաշխմանը:

Վերջինս ենթադրում է օրենքի առաջ հարկատուների հավասարության սկզբունքի ֆիսկալային կենսագործում: Ընդ որում, հարկային բեռի բաշխման հիմքում ֆիզիկական անձանց պարագայում անհրաժեշտ է դնել ընտանիքի

անդամների, իսկ իրավաբանական անձանց պարագայում՝ վերջիններիս համախառն եկամուտը:

Նա վերլուծել է ՓՄՁ-ների դասակարգման ցուցանիշները, ներկայացրել մոտեցումներ դրանց վերանայման ուղիների վերաբերյալ, ինչպես նաև առաջարկություններ արել ՓՄՁ-ների գործունեությունը խթանող հարկային և վարկային խթանների վերաբերյալ:

Վլ. Հարությունյանը ուսումնասիրել է տնտեսության առաջընթացի ապահովման գործում վճռորոշ ազդեցություն ունեցող հարկային և մաքսային մարմինների գործունեության զարգացման հիմնախնդիրները, հարկային վարչարարության բարելավման տեսական և մեթոդաբանական մոտեցումները, տարածաշրջանային ինտեգրման ազդեցությունը հարկային և մաքսային համակարգերի վրա, միջազգային լավագույն փորձի հիման վրա հարկային և մաքսային ծառայողի վարվելակերպի արմատական վերափոխման հնարավոր ուղիները:

Միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա նա բացահայտել է հարկային և մաքսային մարմինների գործունեության կատարելագործման օպտիմալ ուղիները՝ շեշտադրելով նաև կազմակերպչական կառուցվածքի բարեփոխումը և հարկային և մաքսային ծառայողի վարվելակերպի կանոնների բարելավումը:

Վլ. Հարությունյանի տնօրինության 1,5 տասնամյակի ընթացքում ինստիտուտը տարեկան հրատարակել է 1-2 գիտական հոդվածների ժողովածու՝ «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» խորագրով: Հոդվածներից յուրաքանչյուրը պարունակում է ինչպես գիտական նորույթ, այնպես էլ կիրառական առաջարկություններ, որոնք կիրառելի են եղել տնտեսության տարբեր ոլորտներում:

Ինստիտուտի հետազոտությունների հիման վրա պարբերաբար փոփոխություններ են կատարվել ՀՀ տարբեր օրենքներում, ինչպես նաև տնտեսության տարբեր ոլորտների զարգացման հայեցակարգերում: Ինստիտուտը պարբերաբար հրապարակում է կատարված վերլուծությունների արդյունքները, որոնք, մասնավորապես, ներառում են տնտեսության թիրախային ոլորտների հիմնախնդիրների լուծմանն ուղղված կիրառական առաջարկություններ:

Ինստիտուտն ակտիվորեն համագործակցել է ՀՀ կառավարության հետ՝ ներկայացնելով կիրառական առաջարկություններ, որոնց մի մասի հաշվառմամբ ուժը կորցրած է ճանաչվել հարկային երկու օրենք, իսկ մի մասն էլ հաշվի է առնվել ենթաօրենսդրական ակտերում: Կան նաև կիրառական առաջարկություններ, որոնք անուշադրության են մատնվել, սակայն պահպանում

են իրենց արդիականությունը և տարբեր ստորաբաժանումների ռազմավարական խնդիրները լուծելիս կարող են օգտակար լինել գործող կառավարությանը:

Այս տարիներին ինստիտուտն ակտիվորեն համագործակցել է օտարերկրյա գիտական կազմակերպությունների հետ, որոնցից են՝ ՌԴ ԳԱԱ հասարակական գիտությունների տեղեկատվության ինստիտուտը և ՌԴ ԳԱԱ Դադստանի գիտական կենտրոնի սոցիալ-տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտը, հայաստանյան բուհերի հետ՝ ԵՊՀ-ն, ՀԱԱՀ-ն, ՀՊՏՀ-ն և Հայաստանի Պլեխանովի անվան տնտեսագիտական համալսարանի երևանյան մասնաճյուղը, Ֆրանսիական համալսարանը և այլն:

Վերջին երկու տարիներին հրատարակվել են աշխատություններ՝ ակնկալելով, որ դրանցում կիրառված գործիքակազմերը և հիմնուղիները կարող են օգտակար և ուսանելի լինել Հայաստանի գործադիր և օրենսդիր իշխանությունների համար. մասնավորապես, «Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշերը Հայաստանի Հանրապետությունում» (2019 թ.) խորագրով գիտական հոդվածների ժողովածուն, ինչպես նաև «Տնտեսական հրաշքները. գործարկման ուղիները Հայաստանում» (2020 թ.) կոլեկտիվ աշխատությունը, որն ամփոփում է XX դարում «տնտեսական հրաշքներ» իրականացրած եվրոպական (Գերմանիա, Իտալիա, Իռլանդիա, Իսպանիա, Ֆինլանդիա, Լեհաստան, Իսլանդիա), ասիական, խաղաղօվկիանոսյան (Չինաստան, Սինգապուր, Ճապոնիա, Մալայզիա, Ինդոնեզիա, Հարավային Կորեա, Հնդկաստան) և այլ տարածաշրջանների (Վրաստան, Իսրայել) ավելի քան երկու տասնյակ պետությունների տնտեսավարման առաջավոր փորձը:

Ընդհանուր առմամբ, այդ տարիներին ինստիտուտը հրատարակել է 2000-ից ավելի գիտական հոդված, այդ թվում՝ 1000-ից ավելին արտասահմանյան գրախոսվող հանդեսներում, և 200-ից ավելի գրքեր, որոնց մասին մանրամասն ներկայացված է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2006-2020 թթ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին 480-էջանոց գիրք-հաշվետվությունում (ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, Ե., 2020):

ՀՀ գիտական հանրությունը խոր կսկիծով սգում է Վլադիմիր Հարությունյանի անժամանակ մահը և վշտակցում նրա հարազատներին ու մտերիմներին:

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ